հետեւ մեր հասարակութիւնը դեռ չէ հասել զարգացման այն աստիճանին, որ կարողանայ մի ճշմարիտ խօսք յարգել և ընդունել, մանաւանդ մեր Ղազարի հասարակութիւնը, որի մէջ կան այնպիսի անձինքներ, որոնց համար չը կայ խղճմտանք և սուրբ բան։ Նրա բարբառ են համարում ոչնչացնել մի մարդու նոր և թարմ ոյժը և մեծ քաջութիւն են համարում, երբ ճշմարտութիւն պաշտպանողին յաղթում և ճնշում են։

Եւ այսպէս թղթակիցները ստիպված զանազան արգելքներից, չեն կարողանում գրել, օրովհետև ընդունելով, որ մի կտոր հացը քաղցր է և անհրաժեշտ մարդու համար, ուրեմն եթէ նորանից էլ գրկվեն, պիտի մուրացկան դառնան և կարելի է, որ մի այլ վատ բան էլ պատահի, ով գիտէ, Ղազարումը այդ սպասելի է...

Վերջ կամ չորս տարի կը լինի, որ մեր հայ լրագրիները մի օրինաւոր նամակ Ղազարից չեն ստանալ իրանց էջերումը, և եղածներն էլ ունեցել են բոլորովին դատարկ բովանդակութիւն, բայց տեղիս հասարակութեան դառն դրութեան պատճառների մասին ոչ մի նամակում չէ երևել որ և իցէ քննադատութիւն։ Որովհետև ամենքը վախենում են, թէ մի գուցէ վերջին կտոր հացից զրկվին։ Ուստի ես ես բացառութիւն չը կազմելով նոյն զրոների մէջ, որքան կը ներվի ինձ, իր նկարագիրն նամակիս մէջ մի երկու երևոյթներ մեր հասարակութեան կեանքից։

Ցուցիչի վերջին աւարտվեցան տեղիս երկսեռ ուսումնարանների հարցաքննութիւնները, որոնցից երևաց, որ բացի մի երկու վարժապետներից, ոչ մէկը իր աչակերտներին հիմնաւոր բան չէ սովորացրել։ Իսկ ինչ կը վերաբերի աչակերտների բարոյական զարգացմանը, այդ մասին մի միմիայն բան ասել չեմ կարող։ Բայց յայտ ունենք, որ այսուհետև նորընտրեալ հոգաբարձուները կաշխատեն դպրոցները բարեկարգելու և արդէն գործի սկզբից երևում է նոցա աշխատութիւնը։ Օրիորդաց ուսումնարանը գտնվում էր մինչև այսօր գրեթէ մի փլատակված տան մէջ, ուր ցուրտը և անձրեւը ազատ մուտք էին գործում, ինչպէս անապատի մէջ, այնպէս որ ձմեռը ցրտից երեխայք բոլորովին դպրոց չէին գալիս և վարժապետները առանց պարապելու ստանում էին իրանց վարձը։ Բայց մի քանի հին հոգաբարձուներ արդարացնում էին իրանց ասելով, թէ Ղազարում դժուար է գտնել լաւ տաքանող տուն։ Գուցէ ընթերցողը կը կարծէ, թէ երևի, արժան լինելու պատճառաւ վարձել էին այդ տունը, բայց ինչ արժան, երբ Ղազարի նման քաղաքում այդ տունը սանում էր վարձ 450 բուբլի։

Բայց նոր ընտրված հոգաբարձուները ուշադրութիւն դարձրին այդ տան անպատշաճութեան վրա, ժողով կազմեցին, և մեծ դժուարութեամբ ազատեցին օրիորդաց ուսումնարանը այդ բնակարանից և որոշեցին գնել մի ուրիշ տուն, որի գրամանը ստացվեցաւ յուլիսի 5-ին վիճակաւոր առաջնորդից և չուտով դպրոցը, յայտ ունենք, կը տեղափոխվի այնտեղ։

Ռուսաստանի ամեն ծայրից լսվում են զանազան մարդիկի մասին, փոքր էր մնացել, որ մեր գաւառն էլ մարդիկի կերակուր դառնար, եթէ Թերթեքեան վիճակի նահանգապետը չաշխատէր և չուտով կազմեներ չուղարկէր ոչնչացնելու այդ մարդկային թշնամիներին։ Բայց քաղաքից մի մարդ էլ չը պահանջեց, միայն 400 բուբլի օժանդակութիւն խնդրեց։ Բայց որովհետև մեր քաղաքային վարչութեան կասսան արդէն շատ ժամանակ է, որ բոլորովին դատարկ է, ուստի կարգադրված էր ժողովարարութիւն անել, բայց այդ ժողովարարութիւնն էլ կատարելապէս չաջողվեցաւ, և միայն 200 բուբլի հաւաքվեցաւ։

Նահանգապետը, իմանալով տեղիս հասարակութեան անտարբերութիւնը այդպիսի մի գործի մէջ, հեռագրով հրամայեց մարդկի ժողովել։ Այդ միջոցում գտնվեցաւ մի բարերար այն է պ. Ֆաբրիկանը, որ նուիրեց միայն իր կողմից 200 բ.։ Եւ այդ բարեգործութիւնը սկսեցին բամբասել ասելով, թէ այդ կը նշանակէ ապասակ տալ մեր երեսին, մինչէ մենք ես կարող չենք տալ, և այլն։

Վերջացնելով նամակս, չեմ կարող չը միլել այն, որ մեր քաղաքի դումսն այն աստիճան անկարգ, անշոգ և անվայելուչ կերպով է կատարում իր պարտաւորութիւնները, որ չատ ժամանակ չէ անցել, որ նրանից խլեցին քաղաքի տուքերը հաւաքելու իրաւունքը և յանձնեցին պօլիցիային, որովհետև հաւաքել չէր կարողանում և ծառայողների ռոճիկները իր ժամանակին չէր վճարում։

Մի ծառայող

ՆԱՄԱԿ ԴԱՀԱՐԼՈՒԻՑ

—

15 յուլիսի

Եթէ մի հայացք դարձնենք Ակէքսանդրապոլի վիճակի բաղմաթիւ գիւղերի վրա, կը տեսնենք, որ խպաս զուրկ են գրաբարեան մխիթարութիւնից. 50-աւոր գիւղեր անցկենալուց յետոյ հազիւ կարելի է տեսնել մի դպրոց, ուր մի քանի աչակերտներ խառն ի խուռն իրարու վրա լցված՝ առաւօտից մինչև իրիկուն գրաբարի նման կրկնում են, իսկ երեկոյեան ինչպէս բանաստեղծներ, ազատվելով այդ ճիշտ բանտից, գնում են իրանց տները։ Ե՛մէ բաղդի բերմամբ կարելի լինէր մի գիւղում գտնել փոքր ի շատ կանոնաւոր մի դրպրոց, ցաւոք սրտի պէտք է ասել, որ նա էլ տեսադական չէ, այսօր կայ, իսկ վաղը չը կայ։ Վաղը դպրոցը բոլորովին փակվում է։ Ոչ արի՛չ ազդում այս տխուր մեռելութիւնը. ասում են «գիւղացին ինքն է սայլել, ինքն էլ քանդում է, մենք ինչ անենք։»

Արդարև, եթէ գիւղացին հասկանար դպրոցի օգուտը, կարծիք չը կայ, որ այնուհետև նա ինքը կը հիմնէր, ինքը կը հոգար ու կը մտածէր նրա առաջադիմութեան վրա, առանց մէկի կամ միւսի օգնութեանը, բայց տարաբաղդաբար ինքը չէ զգում այդ պահանջը։ Գուցէ ոմանք ասեն, մինչէ քաղաքների դպրոցները մի ե՛նոյն ժամանակ գիւղացոց համար չեն։ Այո՛, ճշմարիտ է, բայց մինչէ ամեն գիւղացի մէջոցները ունի իր որդուն քաղաք ուղարկելու, որ ուսում առնէ, մանաւանդ դեռ ես առաջ պէտք է նրա աչքը բանալ, նրան հասկացնել ուսման նշանակութիւնը և ապա ասել թէ «տար քո որդին Ակէքսանդրապոլի այս ինչ դպրոցը, թող կատարելագործէ իր ուսումը։ Գիւղացին չը՛նայեցեցողութիւն չունի, նա հեռատես չէ, նա նկատում և տեսնում է այն առարկան, որը ուղղակի ը-կած է նրա աչքի առաջ։ Գիւղացին իր գլուխ մէջ միայն երկու տեսակ տուն է տեսնում, և այդ երկուսն է ճանաչում. առաջինը՝ իր խրճիթը, որը ծառայում է իր կենցաղավարութեան համար, իսկ երկրորդը՝ եկեղեցին, այն է հոգու փրկութեան համար. դրանցով նա արդէն ամեն բան կատարեալ է համարում։

Ո՞վ պէտք է այս դժուարութեանց առաջն առնէ, ում պարտքն է ճանաչցնել գիւղացուն ուսումնարանի և ուսման նշանակութիւնը.—Ի՞նչ կարէ ամեն մարդի վրա էլ պարտք կայ, բայց ազգասիրաբար նրանցն է, որոնց ձայնը աւելի ազդում և գիւրամատչելի է սորը ժողովրդի ականջին, որոնց խօսքը համեմատաբար աւելի ազդում է նրանց սրտերին, որոնց միայն է ճանաչում ժողովուրդը իբրև հայր և հոգոյ փրկութեան մխիթարող։ Դրանք են մեր հոգևոր հայրիկները—միմեանցին առաջնորդները և ծխական քահանայքը։ Ես լսում եմ այն քահանաների մասին, որոնցից չատերը ոչնչով չեն զանազանվում ժողովրդից՝ ոչ լեզուով, ոչ մտքով և ոչ մի այլ գաղափարով։ Իսկ ինչ որ վերաբերում է վիճակային առաջնորդների մի քանիսի անտարբերութեանը, այդ չէ կարելի առանց մեղադրանքի թողնել։

Ղարսի նահանգում հայարնակ գիւղերի թիւը համեմատաբար փոքր է Ակէքսանդրապոլի վիճակի գիւղերից, բայց ընդհանրապես ուսումնարանների թիւը անհամեմատ կերպով չատ է վերջինից։ Ղարսի և Բաթումի վիճակի գերապատիւ առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոսը ոչ թէ միայն ուսումնարանների համար գործում է անխոնջ աշխատութեամբ թէ գիւղերում և թէ քաղաքներում, այլ՛ և նոյն ժամանակ վերանորոգում է հայրենեաց աւերակ մենաստանները, և լցնում է նրանց աբեղաներով. Քարոզում, խրատում է գիւղական քահանաներին, ճանաչել իրանց պարտականութիւնքը, միւս կողմից հոգ է տանում վանքապատկան կալուածների մասին և հսկում է երկու վիճակների վրա ես մեծ եռանդով. Այս բազմակողմանի հոգսերով զբաղված մեծագործ անձը չէ վհատում պատահած անյաջողութիւնների ժամանակ, վեհանձնաբար յաղթում է ամեն արգելակիչներին իր նպատակները իրագործելու համար, որոնց մէջն է միայն գտնում իր բաւականութիւնը։ Թող սա օրինակ լինի ոմանց գործելու մինչև ժամանակ ունենք աչքատեսներ։

Ե. Տ. Բարսեղեանց

ՆԵՐԳԻՆ ԼՈՒՐԵՐ

Շաբաթ օր, յուլիսի 26-ին ուղարկեցինք սովելոց օգնող Կ. Պոլսի հայոց մասնաժողովին 2000 բուբլ կարգաւոր ազա Խուսխուբերեանի ձեռքով։ Ուրեմն ընդամենը «Վշակի» խմբագրութիւնը մինչև այժմ ուղարկել է 33,000 բուբլ յոգուտ Հայաստանի սովեալների։

—

«Новое Время» լրագիրը հաղորդում է որ Ներքին գործերի մինիստրութիւնը զբաղված է այժմ մասնաւոր վերաբերմամբ եղած օրէնքների վերանայմանամբ։ Լրագիրը հաստատ աղբիւրներից իմացել է, որ վճռված է մասնաւոր ազատութիւնը խոսքի զանազան պայմանները վերջնականապէս վերցնել։

—

Մի անայտ երկասարդից ՁԱՔԱՔԱԼԻՑ ստացանք 1 բուբլի յոգուտ Հայաստանի սովալների։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիս-Վլադիկավկասի ճանապարհի վրա, Անանուրի և Պասանաուրի ֆլեանների մէջ այս օրերս վից հոգի լաւ զինուորված աւազակներ յարձակվել են գրամ տանող փոստի սայլի վրա, փորձել են գրամարկղը յափշտակել, բայց այդ նրանց չէ աջողվել,- որովհետև հենց այդ միջոցում վրա են հասել մի սարանտաս և մի սայլ։ Աւազակները երկիւղից փախել են, սակայն չը կարողանալով տանել։

—

«Прав. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Ոդեսայում հաստատված է քաղաքային վարչութեան մէջ մի նոր պաշտօն, այն է քաղաքապետի օգնականի պաշտօնը։

—

Թիֆլիսից գրած մի թղթակցութիւն «Голосъ» լրագրում գատողութիւն է տալիս Անդրկովկասի դատաստանական մասի դրութեան վերաբերութեամբ։ Թղթակիցը ասում է որ այժմ բարձրագոյն իրաւաբանական ուսում ստացած երիտասարդները բազմաթիւ են կովկասեան. ամեն ազգութեան մէջ։ Երևին չատ հեշտ կը լինէր նշանակել մեր երկրի այլ և այլ մասերում այնպիսի հաշտարար դատաւորներ, քննիչներ և այլն, որոնք ծանօթ են այս կամ այն տեղական լեզուի հետ, որպէս զի կարողանան ժողովրդի հետ անմիջական յարաբերութիւն ունենալ, առանց դիմելու թարգմանիչներին, որոնք մի կողմից չատ ոգեւ, անբնական և վատ պատրաստված են լինում, մյուս կողմից կարող են այս և այն կողմին հակվել, յափշտակվելով նիւթական չահերով։ Բայց դժբաղդաբար, ասւեցանում է «Голосъ» լրագրի թղթակիցը, մնացանում հակառակն է վիճում. մեր դատաստանական իշխանութիւնը կարծես դիտմամբ աշխատում է նշանակել հայ քննիչին և հաշտարար դատաւորին Ամէնէտիայում, վրացուն ռուսաց Հայաստանում, յոյնին վրաստանում և այլն։ Ադապասով, ասւեցանում է թղթակիցը, արդարադատութիւնը ոչ թէ միայն իր նպատակին չէ հասնում, այլ ընդհակառակն ծնեցնում է տեղական ամբոխի մէջ թերահաւատութիւն դէպի դատաստանական գործը։

—

Այժմ, երբ ժողովրդական լուսաւորութեան մի նեռաոր կոմս Տոլստոյ հրաժարական է տուել իր պաշտօնից, Ռուսաստանի ամբողջ մամուլը քննադատում է նահանջի մինիստրի գործունէութիւնը, Ռուսաց «Դէլօ» անսագրը բերում է այդ առիթով հետեւեալ խօսակցութիւնը մի ռուսի և մի անգլիացու մէջ. «Զարմանալի ազգ էք դուք ռուսները —գնդի էք կարծում.»—«Գնդ մեզ մոտ ամեն բան թարս է և ոչ թէ ինչպէս մեզ մոտ։ Որինակ մեզ մոտ քննադատում են մինիստրին քանի որ նա պաշտօնի մէջ է որպէս զի նա կարողանայ փոխել իր ստած կարգադրութիւնները և ոչ թէ երբ նա իր պաշտօնը թողել է։ Այն ժամանակ արդէն ուշ է և ոչինչ օգուտ չը կայ քննադատել կարգադրութիւնները, որոնք մարդուց կախված չեն, որովհետև նա այլ ևս պաշտօնի մէջ չէ։»

—

«Вѣстникъ Европы», «Дѣло», «Отеч. записки» ամսագիրները, «Голосъ», «Молва», «Новое Время», «Новости» և ուրիշ լրագիրները, բոլորն էլ մերթերան փափագում են մամուլի ազատութիւնը Ռուսաստանում։

—

Ռուս լրագիրները հաղորդում են որ ծայրագոյն յանձնաժողովի կարգադրութեամբ վերցվում է այսուհետև այն իրաւունքը, որ ունէին Ռուսաստանի բոլոր թանգարանաց և թէ քաղաքական վարչութիւնների մեծատուները, առանց պատճառների և քաղաքագրեան, կամայական կերպով հրաժարեցնել իրանց սատրապներին ծառայութիւնից։ Այդ իրաւունքը անուանված էր հեռացնել ծառայութիւնից 3-որդ կէտի հիման վրա։ Այդ սարսափելի կէտը ջնջեց էր բոլոր ծառայողներին։

—

Յուլիսի 28-ին մեր տաղանդաւոր բանաստեղծ պ. Ռաֆայէլ Պատկանեան ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻՑ հասաւ Թիֆլիս։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑՈՒՑԱՍԱՆ

—

Լրագիրների մէջ կարդում ենք հետեւեալ թղթակցութիւնը Աթէնքից։

Այստեղ ստացված հեռագիրները հաղորդեցին, որ Բ. Դուքը մնացիր չէ ենթարկվել Բերլինի կոնֆերենցիայի վճռին, և որ թիւրքաց կառավարութիւնը տեղափոխում է թիւրքաց զօրքերին Կպրիոսում և Հօրարատ փայտի հրամանատարութեամբ զինուորական մի նաւատորմ է ուղարկում յունական ջրերը։ Այդ լուրերից զրգված տեղական մամուլը առաջարկում է յունական կառավարութեանը պատրաստվել պատերազմի համար, որովհետև առանց պատերազմի ցուցատանը անկարող կը լինի միացել իր հետ իրան վիճակված երկիրները։

Թէսալիայից հաղորդում են, որ երբ Բերլինի կոնֆերենցիայի վճիռը՝ այդ նահանգը ցուցատանի հետ միացնելու մասին յայտնի եղաւ Թէսալիայի մի քանի քաղաքների մէջ, թիւրքերը չավարտց շվոթվեցան և թիւրքաց վարչութիւնը արգելից քրիստոնեայ բնակիչներին խօսել քաղաքական գործերի մասին, մանաւանդ Թէսալիան ցուցատանի հետ միացնելու մասին։ Այդ հրամանը չը կատարողը ենթարկվում է առաջին անգամ 5 թիւրքաց լիրա տուգանքի, իսկ երկրորդ անգամ բանտարկման մի քանի ամսով։ Նոյն օրը, երբ յայտնի եղաւ Թէսալիայում Բերլինի կոնֆերենցիայի վճիռը, Ամիրոյի մէջ եղած կանոնաւոր զօրքերի զունդը յայտնեց, որ եթէ իր ռոճիկը չը ստանայ, ամբողջապես կը ցրվի, մասամբ կը միանայ և մասամբ կերթայ հայրենիք։ Նահանգապետ փաշան առաջ աշխատում էր սպառնալիքներով հանգստացնել զունդը, բայց տեսնելով, որ նրանք չեն ազդում զօրքերի վրա, ստիպված էր վճարել զունդին ռոճիկ մի մասը և միւս օրը նրան տեղափոխել։ Քրիստոնեայ բնակիչները երկիւղի մէջ են գտնվում և սպասում են օրից օր, որ Թէսալիան պաշարված կը յայտնվի։ Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նանինան միանում է ցուցատանի հետ, աւելորդ չէ մի քանի տեղեկութիւններ հաղորդել նրա ազգաբնակութեան և զարգացման աստիճանի մասին։ Նանինայի ամբողջ ազգաբնակութիւնը 155,228 է, որոնցից 147,298 յոյներ են, 4,500 բացառապէս յունարէն խօսող թիւրքեր և 3450 հրէաներ։ Ամբողջ գաւառի մէջ 373 յունական ուսումնարաններ կան, 11,057 աշակերտներով և 324 ուսուցիչներով։ Թիւրքաց սակաւաթիւ ուսումնարաններ կան միայն Նանինա քաղաքի մէջ և նրանց մէջ էլ առարկաները աւանդվում են յունարէն լեզուով։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱՆԱՁԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կ. ՊՈԼԻՍ, 28 յուլիսի։ Սուլթանը հրամայեց զինուորական մինիստրին ուղարկել Դուլցինո 2000 զինուորներով։ Մինիստրը խոստանում է, որ Դուլցինոյի նահանգը կը յանձնի չերնոգորցիներին անմիջապէս ժամանակի մէջ։ Սուլթանը հրամայեց ցուցատանի իսկական սահմանական գիծը պատրաստել և յանձնել պետութիւններին։ Պատասում են, որ գործը բարեկամաբար կը վերջանայ։

ՍՈՖԻԱ, 28 յուլիսի։ Բոլգարական իշխանը հրաժարվեց հաստատել բոլգարական ազգային զօրքերի այն օրէնքը, որի համեմատ զօրքերի հրամանատարը ընտրված պէտք է լինի։

ՏԱՇԿԵՆԴ, 28 յուլիսի։ Արքուրխանի բարձրացաւ Կարուլի գահը յուլիսի 27-ին։ Աֆղանիստանի բոլոր մեչիտների մէջ շնորհակալութեան մաղթանքներ կատարվեցան։ Ամիր-Դարիա գետի ձախ ափի վրա գտնված աֆղանական բոլոր քաղաքները լուսաւորված էին։ Մոզարի և Շերիսի մէջ թնդանոթներ արձակվեցան 101 անգամ։ Յուլիսի 26-ին Կուշիման այցելեց Ֆերիսոնի նահանգը, զենեց Կաշգարի սահմանը։ Մեր զօրքերը Ալչայի մէջ են։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 յուլիսի։ Օգոստոսի 2-ին ուղևորվում են Ակսաչ-Տեկիի զօրաբանժինը Կարմիր Թաչի ուղարկած քոյրերը։

Խմբագիր—Տպագրող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԱՐՈՒՆԻ